ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	հ.ն-0774-1	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳԽՏ 1993/6	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Գերագույն խորհուրդ	*Ընդունման ամսաթիվը*	30.03.1993
Ստորագրող մարմինը	ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	30.03.1993
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30.03.1993	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ***որոշում է***.

Լեզվի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը կիրարկել հրապարակման պահից, իսկ

4 հոդվածի 2-րդ մասի «ա» և «գ» կետերը՝ 1993 թվականի հունիսի 1-ից,

2 հոդվածի 4-րդ մասը՝ 1993 թվականի սեպտեմբերի 1-ից,

3-րդ հոդվածի 1-ին մասը՝ 1994 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝

ա) Հայաստանի Հանրապետությունում պետական լեզվաքաղաքականության իրականացման նպատակով ստեղծել կառավարությանն առընթեր Լեզվի պետական տեսչություն,

բ) մեկամյա ժամկետում հաստատել Լեզվի պետական տեսչության պետին, տեսչության կանոնադրությունը և գործունեության ծրագիրը,

գ) վեցամյա ժամկետում ընդունել Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության պետական ծրագիրը,

դ) երկամյա ժամկետում սահմանել սպասարկման ոլորտի այն ծառայությունները, որոնց վրա տարածվում է Լեզվի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 3 հոդվածի 1-ին մասը,

ե) մինչև 1994 թվականի հունվարի 1-ը ապահովել.

- Հայաստանի Հանրապետությունում հայերենի ուսուցման հնարավորությունները բոլոր ցանկացողների համար, անկախ քաղաքացիությունից, ազգությունից, բնակության վայրից,

- հայատառ գրամեքենաների, հեռագրական սարքերի, հայերեն ստեղնաշարով համակարգիչների արտադրությունը կամ ներմուծումը,

- համակարգիչների՝ հայերեն ծրագրային փաթեթներով հանդերձավորումը:

Լեզվի պետական տեսչության պետին նշանակում և ազատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կրթության և գիտության, լեզվի և մշակույթի հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կրթության և գիտության, լեզվի և մշակույթի հարցերի մշտական հանձնաժողովը կարող է երկարաձգել սույն օրենքի 4 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի կիրարկման ժամկետները առանձին ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների համար:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի իրավական հարցերի և կրթության և գիտության, լեզվի ու մշակույթի հարցերի մշտական հանձնաժողովներին՝ եռամյա ժամկետում Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացնել սույն օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ:

Սույն օրենքի կատարման պատասխանատվությունը ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում անմիջականորեն և անհատապես դրվում է դրանց ղեկավարների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Բ. ԱՐԱՐՔՑՅԱՆ

30 մարտի 1993 թվականի,
քաղ. Երևան
արձ. հ. 293, կետ 5
հ.ն-0774-1